

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Անցեալ ամիսը սկսւեց մի ընդհանուր շարժումով, որը տարածւեց ամեն տեղ, որտեղ կան կրթութիւն ստացող երեխաներ և պատանիներ, Դուք տեսնում էք, որ «Մանուկների արշաւանքը», որը չը գիտեմ թէ խաչակիրների ձերբորդ արշաւանքն էր, միմիայն միջին դարերում պատահելու բան չէր, այլ և մեր ժամանակների: Բայց այս զանազանութեամբ, որ առաջինը, պատմականը, միայն մի անգամ պատահեց և պրծաւ. մեր ժամանակներինը՝ դատարարուած է միշտ և ամեն տարի և ամեն տարաւ միևնոջն ամսին կրկնւելու: Յունիս ամիսը, ումն էլ որ չը լինի, աշակերտները իրանցը կարող են համարել և ուղէք, չ'ուղէք՝ ճոքա ձեզ կը ստիպեն իրանցով դբաղւել, ճոքա մասին հաշիւ տալ, իրանց մէջ հերոսներ հանդիսացածների անունները ոչ միայն կողմնակի կերպով իմանալ, այլ և այդ անունները հրատարակել լրագիրներում, իմանալ ճոքա ձր աղբին, ձր կրօնին, ձր դաւանութեան պատկանելը, ճանաչել ճոքանից մեղալուորներին: Նոքա ձեզ կ'ասեն և դուք էլ կը լսէք մեծ հաճութեամբ, թէ ձւր պիտի ալսուհետեւ դնան, ինչին պէտք է նւիրեն իրանց միտքն ու ուշքը, ինչ գիտութիւն պէտք է սովորեն:

Ձգացւեցէք, պատանիներ, այն ուշադրութիւնից, որ ձեզ նւիրում է հասարակութիւնը: Դուք դեռ ևս գործ չէք կատարել, այլ միայն լսել էք, ինչ ձեզ լսել են հրամայել: Ձեր բոլոր քաջագործութիւնը այն է եղած, որ դուք, պարտաւորւած, ձեր գլուխն էք մտցրել շատ թէ քիչ տարրական գիտելիքներ, որ մշակել են գիտութեան հանճարները և որ դուք ընդունել էք ոչ հանճարների ձեռքով, այլ հասարակ մահկանացուներից, որ պիտիք են ձեր վարժապետները: Դուք դեռ ևս միայն սնունդ էք առել, ուրիշ ոչինչ: Այն, ինչով բնութիւնը, Աստուածը ձեզ օժտել է՝ բանականութիւն, նորա սնունդն էք առել դուք հասարակութիւնից, աղբից, պետութիւնից և անքան, որքան կարողացել է ձեզ համար սնունդ պատրաստել մարդկութիւնը և այն ձևով, ինչպէս կարողացել է մարդկութեան մտքի նւիրից խմոր պատրաստել հասարակութիւնը, աղբը, պետութիւնը: Նւ

դեռ այդ բոլորը ձեզ տւած է միայն անքան, որքան ձեր խելապատակը կարող է ձեր հասակում իւր մէջ ընդունել՝ մարսելու համար։ Եւ դուք ինքներդ կը վկայէք, որ ձեզ տւած հատիկներից, 65, ո՛րքանը, ո՛րքանը մնացել են ձեր ուղեղների քչամանում—առանց արիւնի մէջ անցնելու...

Այդ ամենը գիտէ հասարակութիւնը, բայց և այնպէս նա ուրախութեամբ կարդում է ձեր մասին տեղեկութիւններ, և որը հպրակած ու մալրական, որը եղբայրական ու քուրական չափաւորութեամբ իրանց տաժած զգացումներով դէպի ձեզ՝ կարծես եկել էին ձեզ ողջունելու զպրոցի չէմքից ձեր ոտը դուրս դնելը, ինչպէս 7—8 տարի առաջ ձեր ծնողները, ձեր ձեռքը բռնած, երկիւղածութեամբ և սրտները լիքը ջերմ աղօթքով ողջունում էին ձեզ զպրոցի չէմքի ներսը ձեր ոտ դնելը։

Այդ ինչի՞ցն է արդեօք։ Նրանից, որ նա ձեզ վերայ է դնում իւր չղտերը մեր երկրի, ազգի, գիտութեան և բարոյական լաւաջիւղութեան գործի համար։ Այդ սպասելիքը ամեն մարդ թագցրած ունի իւր սրտում, վկայէ նա այդ, թէ չը վկայէ—այդ նույնն է։ Բայց իմացած կացէք, պատանի երիտասարդներ, ձեր հայրենի ժողովուրդը երբ այդ առիթով ոգեւորութիւն է չալտնում, նա չի դարմանում ոչ ձեր գիտութեան վերայ, որ չնչին է, ոչ էլ ձեր ապագայ անձնական չաջողութիւնների պատկերով է գրավւած։ Այդպիսի չաջողութիւններով չէք զարթեցնիլ ոչ ոքի մէջ ոգեւորութեան զգացումներ, կամ նոյն իսկ բարեհաճ ուշադրութիւն դէպի ձեզ։ Միթէ այդ հասկանալի չէ և դեռ բացատրութեան կարօտ։ Ո՛չ երբէք։

Նրեխան որ երեխայ է, նա էլ կը դառնար ատելի արարած, եթէ միայն մարդս կարողանար տեսնել նորա սրտում ապագայ ոճրագործի, ապագայ հարստահարողի, ապագայ անպիտանի մէկի կենդանի պատկերը։ Եւ ախօր եթէ հասարակութիւնը ձեզ ողջունում է, նա ենթադրում է ձեր մէջ ապագայ լաւ գործիչներ. նա ենթադրում է, որ ձեզնից ամեն մէկը դառնալու է մի անհրաժեշտ անդամ ձեզ կեանք տւած հասարակութեան, նորա կարիքները հասկացող, ձեր գիտութիւններով ու ձեռք բերած ձեռնհասութիւնովը նրան օգնող և ոչ թէ նորա տգիտութիւնից կամ անճարութիւնից օգտուող, գովող, կորցող և կամ ուղղակի անպէտք, գործից փախչող ինքնահաւան և ծով գիտուններ։

Միմիայն և միմիայն այդ սպասելիքն է, որի շնորհիւ դուք հասարակաց ուշադրութեան քաղցրութիւնն էք վայելում ալօր։ Զգացւեցէ՛ք, ուրեմն, այդ ուշադրութիւնից և աշխատեցէ՛ք, որ ձեր ապագայ գործունէութիւնով և ձեր զգացումներով արդարացնէք մեր ամենքիս սպասելիքը։ Այդ ասելուց չտոյ մաղթում եմ և ես բարի ճանապարհ։

Մի հազադիւտ երևոյթ, գուցէ մեղանում դեռ չ'հղած երևոյթ. այս տարի միջնակարգ դպրոցների դասընթացը աւարտողների մէջ ամենքը և՛ զարմացմամբ և՛ հաճութեամբ կարդացին երեք թուրք օրիորդների անունները Ուրեմն, մտածեցին ամենքը, թուրք հասարակութիւնը պատուում է խաւարով ծածկած քօղը, որի ետեւ ալքան դարեր փակւած է մնացել մահմեդական միտքը: Միթէ մահմեդական աշխարհի սիւները ալքան խարխուլ են դառել, որ մի քանի աղատամիտների զիմադրութեան չը դիմանար... Օ՛հ ոչ, անշուշտ ոչ—չտապեցին պատասխանել նորաւարտ թրքուհիներից մէկի աղատամտութեան մէջ «մոլորած» ծնողներից մի զոյգ, Հետաքրքրական է փաստը, որի հասարակական նշանակութիւնը ոչ ոք չի հերքել: Եւ անհ թէ փաստը ինչու մն է: Ռուսաց օրիորդաց ինստիտուտում աւարտողներից մէկին արդէն շտապել են տալ «հարեմ» և, ուրեմն, դատաւարուած է կրել այն ստրկական դրութեան կապերը, որը մինչև անգամ թուրքերի հասարակ դասակարգի աչքում համարւում է ամօթալի: Տիկին Ա., հաւատացնում է ռուս լրագիրներից մէկը, մտել է հարեմ արդէն հասակն առած և ամուսնացած մի մարդու, որը, որպէս ասում են, իւր նոր կնոջ հասակի աղջիկներ ունի: Մահմեդական պսակի, ք ե բ ի ն ի խորհուրդը կատարւել է շատ վկաների ներկայութեամբ, և լօղուտ աղջկալ հօրը կտրած տուգանքը, պսակալուծութեան դէպքում, որոշւած է 30.000 ռուբլի: Եւ այդ օրիորդը, որ ալօմ հարեմի անդամ է, միակ աղջիկն էր իւր հօր, որը, չաւելումն բոլորի, մի բոլորովին ապահովւած մարդ է և խոշոր դիրք ունի բռնած թրքական հասարակութեան մէջ. բանից ուրեմն դուրս է գալիս, որ մի ծիծեռնակ դեռ գարուն չը բերեց թուրքերի համար: Սակայն, ի պատիւ Թիֆլիսի թուրք հասարակութեան, պէտք է ասել, որ նա սրտանց զաւրացած է այդ դէպքի առիթով:

Յունիսի ընթացքում խօսած ճառերից ես գտնում եմ երկուսը, որոնցից մէկը ես իմ ձեռքով կ'ուզէի դնել իմ ընթերցողների առջև, թողնելով որ պարոն «Շ»-ը երկրորդից անէ այն գործադրութիւնը, որ նա կ'ուզէ անել: Երկուսն էլ խօսեցել են ֆրանսիացիք: Նոցանից մէկը Ռընանն է, միւսը Ֆերրին. այս վերջինը Ֆրանսիալում իշխող կուսակցութեան պարագլուխ, առաջինը, Ռընանը, ո՛ւմը չէ չալանի ալդ՝ դրականութեան և գիտութեան ալօմ փալփող աստղերից մէկը, բայց մէկը, որը գիտութեան պահանջների խստութեան հետ կարողացել է միացնել խօսելու մի շնորհք, որը նորանից դարձրել է հրապարակախօս-պատմաբան-գրասէր-հոետօր, այն աստիճան ժողովրդական, որին սակաւ գիտնականներին չաջողել է ներկալ դարում: Գնացէք մի ժողով կազմւած 99 քնթի մազ արխեօլօգներից, ստատիստիկոսներից և էլ ի՞նչ գիտեմ ինչ գիտնականներից, բայց երբ 100-րդը

Ռընանն է, իմացէք, որ լսողութիւնը լարելու արժանի մի խօսք կ'ասուի, որը և կը կազմի բոլոր խօսակցութեան աղբիւրը: Համով-հոտով մի մարդ է, որին մարդս բոլորովին այն կերպ չի կարող երևակայել, քան ինչ նա է իսկապէս: Երբ ես նորան առաջին անգամ տեսայ, մտածեցի.—Այս մարդը, որ Քրիստոսի կենսագրութիւնն է գրել և «Քրիստոնէութեան սկզբնաւորութիւններն» մի քանի հատորները, այս մարդը, ասացի, որի մասնագիտութիւնն է երբայրէն լեզուն, այնքան խորն է մտել իւր մասնագիտութեան մէջ, որ ինքը վերջ ի վերջոյ երբայրէն է դառել: Collège de France անունով Պարիզում ինչ որ մի դպրոց, թէ համալսարան, թէ ձեմարան, թէ ինչ քաղաքացախ կայ, որի պրօֆեսորներինցն է Ռընանը: Անշուշտ բարձրագոյն ուսումնարան է այդ կօլլէժ դը Ֆրանսը. բայց կանոնաւոր համալսարաններին աչք ու ականջը սովոր մարդը չի կարող նորա համար լատով մի անուն ստեղծել, այն աստիճան անորոշ բնաւորութիւն ունի նա: Լսողները ուսանողներ չեն, այլ միմիայն լսողներ. փողոցով անցնողը, մանաւանդ երբ նա դադրած է, ապահով է, որ լսարաններից մինում կարող է երկար աթոռներից մինի վերաջ նըստած քուն մտնել էստեղծի մասին դասախօսութեան ակոմպանիմենտով:

Ինչ և իցէ, դադրածութիւնից է, թէ հետաքրքրութիւնից—մի անգամ երբ մտայ ալդտեղ, դասախօսութիւնների ցուցակում ընկաւ աչքիս Ռընանի անունը. ճիշդ այն ժամին նա պիտի դասախօսէր: Որոնեցի նորա լսարանը, մտալ... Հասարակ մեծութեան մի սենեակ, մեծ սեղան, որի շուրջը նստած 25—30 հոգի խորին ուշադրութեամբ հետևում են նոյն սեղանին նստած պրօֆեսորին: Դա Ռընանն էր. մեծ, հաստ գլուխ, անբեղ, անմարում, փոքր ինչ ճաղատ, ինքը լիքը, կենդանի՝ բայց հեղ կապոյտ աչքեր. կը լինէր վստան տարեկան (այդ 1878-ին էր): Քննում էին ինչ որ ձեռագիրներ և համեմատում բնագիրներ: Ինչ խօսք, որ երբայրէնով էին զբաղւած: Իմ ուշադրութիւնը ամբողջապէս կլանւած էր Ռընանի անձնաւորութիւնով: Միթէ, մտածեցի ես, այս հաստ և չաղ գլխում այն ուղեղն է, որի ծալքերից բխում են Ֆրանսիական լեզուի ամենանուրբ թելերը. որովհետև ոճի կողմից ոչ ոք Ֆրանսիական Ռընանի հետ չի մրցում, նամանաւանդ որ իւր ոճի մէջ նա գիտէ գիտութեան հետ միացնել մի անսահման բարութիւն և մի ինչ որ ոգի, որը նոյն ինքն մարդկայնութիւնն է: Դասից շուրս գալուց փտոյ ես զնեցի մօտակալ մագաղիկներից մինում նորա պատկերը, իբր լիշտակ, որին դիմում եմ ամեն անգամ, երբ Ռընանից լրագիրը մի լուր է բերում—այն աստիճանի չեմ կարողանում հաշտել նորա կերպարանքի հետ, երբ նորա մտքերն եմ կարդում:

Դիմում եմ, ուրեմն, Ռընանի խօսածին, քանի որ Ռընանը մինչև այժմ ոչ ոքին չի ձանձրացրել:

Պէտք է ասեմ, որ Ֆրանսիական տարին մի անգամ լինում է գիտ-

նական ընկերութիւններէ ընդհանուր ժողով: Այդ ժողովումն է, որ Ռե-
նանը արտասանեց հետեւեալը.—

Պ ա ռ ո ն ն ե ր .

«Երբ հասարակաց լուսաւորութեան պ. միջոցներէ մի պատգամաւոր
եկաւ ինձ պատելու, մի ամիս առաջ, որ ես մասնակից լինեմ ալս հան-
դիսաւոր ժողովին, ես ալեքան զգացեցի հաճութիւն, թէ ես մի քանի բո-
ւիւն ձեռք հետ խօսակցելու առիթը պիտի ունենամ, որ ես մոռացաւ մի
քանի տարի առաջ արած իմ խելացի վճիռը՝ ալլ ես երբեք չը խօսել մի
մեծ ամֆիթատրոնում, որ իմից աւելի երկտասարդ և աւելի վստահ ձա-
ների համար է շինած: Սակայն, փորձութիւնը շատ էր մեծ: Մի ձեռք նման
առաջնորդի, որը ալեքան լուսաւոր ընտրողութեան արդիւնք է, ինձ հա-
մար սակաւագիւտ բաղդ է թւում. ձեր ժողովը ինձ թւից՝ որպէս մի կեն-
դանի ապացոյց մի մտքի, որը ինձ սովորական է, կամ, աւելի լաւ ասած,
որպէս վճռական ապացոյց զօրութ մի բողոքի, որը ինձից դուրս է պրո-
նում ամեն անգամ, երբ ես լսում եմ ալն ցաւալի և սխալ կարծիքը, իբր
թէ Պարլիզից դուրս աշխատել չի կարելի:

«Մի ալիպիսի ժամանակ, որպիսին ալսօր է, ալիպիսի հակացք ուղ-
ղակի անմիտ է, եւ է մի non-sens:

«Ալեքան բարձր պարզեցնելու ու աշխատութիւնների ալս ահազին
մասսալի առջեւ, որին ամենաձեռնհաս դատաւորները վարդանք են ցոյց
տալիս՝ ձեր վիճաբանութիւնները անսահման, բազմազան աւարկաների
մասին լսելուց վետոյ, որոնցով զբաղւում է մարդկային ոգին, դաւառի գիտ-
նական արդաստարութիւնը կարօտ չէ ապացոյցի: Բաց և ալեպէս հակա-
ռակ կարծիքը գալթակում է շատերին և շատերին ճանապարհից հանում
է. եւ կ'ուզէի որոնել նորա պատճառները և, եթէ կարելի է, ցոյց տալ մի
քանի միջոցներ, որոնցով մի քանի իսկական անվարարութիւններ կա-
րելի կը լինի նսեմացնել:

«Ալն կարծիքը, թէ գաւառում չի կարելի աշխատել, հարկւր տարի
չը կալ, որ գոյութիւն ունի: Հարկւր տարի է, որ Բիւֆֆօնը նոր մեռած
էր և բնական պատմութեան ընդհանուր գծերը նոր գտնւեցին Մոնբար'ում:
Մի քիչ դորանից առաջ Մօնտեսքիէօն գտել էր քաղաքական պատմութեան
ամենախոր օրէնքները Բօրդօլում: Ալն ժամանակ ոչ միայն աշխատում
էին գաւառում, ալլ ալետեղ ստեղծում էին դ ր թ ո յ գ լ ու լ ի ն ե ր : Ոգեկան
իրերի կենդրոնացումը Պարլիզում սկսում է 19-երորդ դարու սկզբի տարի-
ներում: Ոգու լուսոյ ալս հրաշալի կենդրոնի շուրջը կազմեց ստեղծի մի
խաւ:

«Ֆրանսիայի մտաւոր ուժերի մի շարք տեղափոխումն էր կոտարւում:
III թւականի սահմանադրութիւնը վճռել էր, որ ամբողջ Հանրապետու-
թեան համար լինի մի ազգային խնամարկում, որի պարտականութիւնը լինէր

հաւաքել կատարելագործութիւնների գիւտերը, գեղարւեստը և գիտութիւնները: Մի քանի շաբաթ լետող, Դաշնագործութիւնը վճռեց. «Գիտութիւնների և արհեստների խնտիտուտը պատկանում է ամբողջ Հանրապետութեան. նա հաստատւած է Պարիզում»:

«Պարզ է, որ այդ վճիռը չը չարուցեց ոչ մի հակառակութիւն: Իւր առաջին կազմակերպութեամբ, խնտիտուտը բաղկացած էր մի քանի անդամներից Պարիզում բնակւող և մի նոյնքան անդամներից՝ բնակւող Հանրապետութեան ալ և ալ մասերում: Քանի մի տարիներից լետող տեսան, որ անհնարին է մի տեղ ժողովել դաւառաբնակներին. Պարիզ բնակելը դառաւ պարտաւորիչ: Անխուսափելի օրէնքը կատարւում էր: Մի մաքսիմ, որը պրակտիկի մէջ պաշտպանում են նոյն իսկ նոքա, որոնք թէօրիալով նորան հերքում են, չէր կարող չ'ունենալ իւր խոր արմատները: Հակառակ ուղղութիւնը՝ չափազանց կենդրոնացումը Պարիզում՝ մի քանի կողմերից իրաւացի էր:

«Նա արդարև իրաւացի էր այն իրական անհրաժեշտութեան առջև, գիտութեան մի առժամանակեալ դրութեան մէջ, որը պահանջում էր, որ ստեղծող ուժերը կենդրոնանան մի կէտում: Գիտութեան բիւլջետը այն ժամանակ թող էր. պարագաները շատ սահմանափակ էին, չէր կարելի ցրելը: Վարպետները նմանապէս քիչ էին թւով. Երբ Լապլասը միակ ինքը ունէր բռնած տիեզերքի մեխանիկի խնդիրը, երբ Բերթոլլէի լաբորատորիան կենդրոնացնում էր ջանքերը նոր ծնած քիմիայի, երբ բնական գիտութիւնների կռիւն ամբողջապէս կատարւում էր Կլաւիէի և նորա մրցողների շուրջը, երբ արեւելագիտութիւնը ծագում էր Սիլվեստր Սասիից, — դպրոցների շատութիւնը աւելորդ էր: Այդ շատութիւնը մինչև անգամ կարող էր աղէտաբեր լինել: Գիտութեան, գրականութեան և գեղարւեստի մէջ ստեղծագործութիւնը սովորաբար կատարւում է շատ որոշ կէտերի վերայ. ստեղծագործութեան դարը անհրաժեշտ կերպով միաւորական է: Այն տեղը, ուր աշխատում էր Գալիլէյը, դէպի իրան էր քաշել ամբողջ աստեղագիտութիւնը: Երբ Դէկարտը և Նիւտոնը իրանց ուղեղում պահած ունէին իրանց ժամանակի ամենաբարձր գաղափարը, նոքա ևս դարձուրելի կենդրոնացնողներ էին:

«Ուրեմն դարմանալի չէ, որ այն փալլուն և պողաբեր շրջանը, որ Ֆրանսիան անցել է այս վերջին եօթնասուուն և հինգ տարիներում, պահանջած լինէր ծնւելու մի տեղ, մի տեսակ բուն, ուժեղ կերպով տաքացրած և գիտնականօրէն սարքւած՝ այնքան սերմեր ջերմացնելու համար, որոնք այս բոլորէին դառել են ջոկ աշխարհներ: Հոգիների համար, որպէս և մարմինների համար, տաքութիւնը գոյանում է մերձաւորութիւնից: Ամեն գիտութեան սկիզբնաւորութիւնները մեղ տանում հասցնում են մի շատ փակ դպրոցի, մի ձուր, եթէ համարձակւեմ արդէս ասել, որ իւր մէջ է պալունակում զարդացման սկզբունքները և նոր ծնածի կերակուրը: Նրկնքի

քարտէշը շինելու համար հարկաւոր էր մի ղրտարան, օգտերատօրիա, Հին բնադիրներէ վերականգնումը ուրիշ տեսակ անկարելի էր, ի թէ ոչ մի ընդարձակ գրադարանի մերձակայութեամբ։ Աբէլ Ռէմիւզա՞ն չէր ստեղծել շինարէնի գիտութիւնը մի քաղաքում, ուր չը լինէիր չինական գրքերի մի ժողովածու։

«Բայց ալժմ իրերի դրութիւնը այլ է, Հասունութիւնը, որին հասել են բազմաթիւ գիտութիւններ, այն կենդրոններէից դուրս է, ուր ստեղծւել են նոքա։ Գրքերը և գիտական ժողովածուները այնքան բազմաթիւ են դարձել, որ նոցա ընթերցումից կարելի է զալ ուրոյն եղրակացութիւնների, Թողնենք անդական պատմութիւնը, որը այնքան հետաքրքրական է, գիտութեան գործի կէսը կարող է կատարւել կարէնետի աշխատանքով։ Գիտութեան շատ ճիւղերում, արեւելագիտութեան վերաբերեալ, ուսումնասիրի մեծագոյն մասը, օրինակ, հին գրքերը, որ դուած են նորագոյն մեթոդների հաստատուելուց առաջ, միայն երկրորդական նշանակութիւն ունին։ Մի փոքր զոհարելութիւնով մի խորաթափանց հետազօտող կարող է բազմաթիւ առաջնակարգ լսնդիրներէ վերաբերեալ ունենալ իւր շուրջը բոլոր տարրերը՝ բոլորովին նոր քննադատական հետազօտութիւններ անելու համար։ Եւ շատ դարմանալի է, որ հէնց ամենանոր գիտութիւններն են, որոնք պահանջում են ամենից քիչ պարագաներ և որոնք աւելի լաւ կարող են մշակւել հին գրքերի պահեստներով սակաւ հարուստ քաղաքներում։ Հէնց ձեռք օրինակ՝ համեմատական լեզուագիտութիւնը։ Սկզբից մի քանի հաղար ֆրանկ վեր դնելով ու բաժանորդ գրւելով երեք կամ չորս մասնագիտական ժողովածուների, ձեռք կը բերեն բոլոր անհրաժեշտ պարագաները այս երկար և համբերութիւն պահանջող համեմատութիւնների համար, որոնց համար հոգու հանգստութիւնը, որ կարելի է վաւելել դաւառում, ներկայացնում է այնքան նպաստաւոր պայմաններ։ Այսպիսով բազմաթիւ ճիւղեր կան ուսումնասիրութիւնների, որոնք կարող են մշակւել միանգամայն մասնաւոր կերպով և ամենալեւնեալ տեղերում։ Դորա ամենալաւ օրինակը տւեց հռչակաւոր Բօրգհելի, որը գիտմամբ ընտրեց Սէն-Մարէն ¹⁾, որ լատինական արձանագրութիւնների գիտութեան՝ էպիգրաֆէալի ուսումնասիրութեան կենդրոնը դարձրեց։ Նա դերագասեց մի գիւղ, ուր նորանով զբաղւում էին նորան միմիայն լարգանքով գլուխ տալու չափով, քան պապական Հռոմը, ուր նրանով շատ կը զբաղւէին բայց միայն նորան խանգարելու համար։ Եւ նոյնը կ'ատէի ֆիլօսօֆիական գաղափարների համար։ Դարւոյնը երբէք չ'ուղեց Թողնել այն գիւղը, ուր մի տեսակ բազմաբնակները նորան հաստատել էր։ Թողնելով Պարիզին և մեծ կենդրոններին սակաւագիւտ բաները, սահմանափակ մասնագիտութիւնները, հետազօտութիւնները, որոնք պահանջում են ուժեղ գործիքներ, դաւառը

¹⁾ Մի փոքրիկ Հանրապետութիւն՝ 7000 բնակիչներով, ամեն կողմէից շրջապատած Իտալիայով։

ալդպիսով կարող էր արդիւնքով ձեռնարկել անթիւ աշխատութիւններ, որոնք ցաւով բաժին էին գիտական մարաքաղաքներին, բայց որոնք այժմ ամենուրեք կարելի են...

«Մինչև անգամ ամենախի աշխատութիւններ, որոնք պահանջում են հին գրքերի ընդարձակ պահեստներ, աշխատութիւններ, որոնց համար Պարիզը ներկայացնում է մեծամեծ առաւելութիւններ, դոցա համար իսկ դաւառը ունի միջոցներ, որոնց նա չը գիտէ: Ֆրիսոսֆալութեան քննութիւնը տալուց քանի մի օր ցետոյ, 1848 թ.-ին, ես նշանակւեցի ուսուցիչ Վանդոմի լիցեւում, որ ինձ մի քիչ դիւր չ'եկաւ, որովհետեւ ես արդէն սկսել էի իմ աշխատութիւնը Աւերրօիսի և Լաւրրօիզմի մասին: Պ. Կուլէնը (հռչակաւոր Ֆրանսիացի ֆրիսոսֆան) և պ. Լըկլերկը բարութիւն ունեցան իմ գործով հետաքրքրւելու: Ես դիմեցի պ. Կուլէնին, որը ինձ պատասխանեց մի տոմսակով մօտաւորապէս այսպէս գրած. — «Եթէ հարկ լինի վկայել վարչութեան, իմ թանկագին Ռենան, թէ Վանդոմը աշխարհիս ամենալատ ընտրած տեղն է Աւերրօիսի մասին գրելու համար, ես նրան կ'ասեմ այդ անժխտելի ճշմարտութիւնը»: Ես չը գիտեմ թէ Վանդոմը հին գրքերով հարուստ է թէ ո'չ. բայց ես պէտք է ասեմ, որ գոնէ աշխատութեանս մի մասը ես գրել եմ այդ ծովափերում: Մի քանի ամսով զնացած լինելով Սէն-Մալօ, — մի քաղաք, որը աւելի չէ գիտնական, քան Վանդոմը, ես ամենող գտաւ մի գրադարան՝ կազմած վանքերի հին մնացորդներից, ուր փոշիի մի խաւի տակ քնած էր ամբողջ սխօլաստիկը, ես գտաւ Արիստօղելի հրատարակութիւնները Աւերրօիսի նկատողութիւններով, տպած Վենետիկում, Զիմարավի ցանկերը և բաւականի թւով մեկնութիւններ Պադուայի վարժապետների: Է՛հ, ի հարկէ, շատ ժամանակ է, որ նրանց կարդացող չի եղել և դեռ խնդիր է, թէ երբ և իցէ նրանց կարդացնել են: Բայց ինչ և իցէ, այս փոշոտ հատորների մէջն է, որ ես շարադրեցի Լաւրրօիզմի պատմութեան մի քանի գլուխները: Դորանից ես դուրս բերի այս համոզմունքը, որ երբ մարդս լաւ որոնի, գաւառում կը գտնի նիւթեր անասելի աւելի քան կարծում են, նաև ընդհանուր պատմական աշխատութիւններ ի համար:

«Եւ որքան նպաստաւոր են հանգստութեան պայմանները, որ ներկայացնում է դաւառը, քան անձուկ, վրդով, անհաստատ պայմանները Պարիզի կեանքի: Գիտնականի պահանջներից մէկը բնակարանն է՝ ընդարձակ, կարմարաւոր, ուր մարդ չը վախենալ ոչ տեղափոխութիւններից և ոչ խանգարումներից: Լեզուագիտական, որպէս և ֆիզիքական գիտութիւնները կարօտ են ընդարձակ սեղաններով կահաւորւած գործանոցների, որպէս զի զանազան աշխատութիւններ և թղթեր իրար հետ չը խառնւեն: Եւ բացի դորանից, ճշմարտութեան սէրը մարդուս դարձնում է միամեակեաց. դաւառը տալիս է այդ առանձնութիւնը, հանգստութիւնը, ազատութիւնը: Ես կաւելացնէի՝ բնութեան հաճուքը և ժպիտը: Այս խստապահանջ աշխատու-

թիւններէի համար հարկաւոր է ոգու անդորրութիւն և բերկրութիւն, աղատ ժամանակ և կատարեալ ինքնիշխանութիւն, Մի մեծ քաղաքի արւարձաններում մի գեղեցիկ տուն, մի երկար զահլիճ՝ գրքերով կահաւորած, արտաքուստ ծածկած բնագալեան վարդերով, մի պարտէզ՝ նեղ ուղիներով, ուր կարելի լինի դրօսնել մի ըստէն ալս գրքերից քաղած ծաղիկները հետդ,—դոցանից և ոչ մէկը աւելորդ չէ հոգու առողջութեան համար, որ ալնքան անհրաժեշտ է մտաւոր աշխատանքների համար, բացի երբ մարդս միլլիօնատէր է (որ հաղապիւտ է մեր մէջ!)։ դէ որոնեցէք ալդպիսի բան Պարիզում, մի որ և իցէ չորրորդ վարկում, ալս անհամ տների մէջ, որ շինել են ճարտարապետները, որոնք ոչ մի ըստէն գրասէր կենդողի ենթադրութիւնը չեն արել։

«Մեր գրադարանները, ուր մենք ալնքան սիրում ենք դրօսնել մեր գրքերի և մեր մտքերի բազմազանութեան մէջ, սև կարիւնետներ են, ամբարներ են, ուր գրքերը կուտակւած են, չ'արտադրելով աղօտ լոյս անդամ։

«Պարիզը ունի Կօլլէժ դը Ֆրանս. ալդ բաւական է, որ ես կպչեմ ալնտեղին։ Բաց, հարկաւ, եթէ Կօլլէժ դը Ֆրանսը լինէր սուրբ Բերնարդի ժամանակաւ մի վանք, անտառի խորքերում կորած, օփինների երկար ծառուղիներով, կաղնիների, եղեգների, ժալուրի մէջ, փակ ճեմնիքով, ուր կարելի լինէր անձրևի ժամանակ մանգալ, ապարդիւն սենեակների մի շարք, ուր երկար սեղանների վերայ կը բերէին դարսելու նոր արձանագրութիւններ և ալն,—ալնտեղ մարդս աւելի քաղցրութեամբ կը սպասէր մահան ժամին, և գիտական արդիւնաբերութիւնը ալդ հաստատութեան աւելի գերազանց կը լինէր, քան ինչ կալ ալժմ. որովհետև միալնակութիւնը լաւ ներշնչող է, և աշխատութիւնների արժէքը համեմատ է ալն հանդրատութեան հետ, որով նոքա շինւում են։

«Մենք կը չափազանցէինք մեր ասելիքը և նորան կը լեզաթիւրէինք, եթէ մենք ուղեւալինք պնդել, թէ ամեն տեղ լարմարութիւնները նոյնն են։ Բոլոր քաղաքները չեն կարող ունենալ Պարիզի Ինստիտուտը, մի Կօլլէժ դը Ֆրանս, մի գիտարան, մի թանգարան, մի դպրոց ձեռագիրների։ Ամեն համալսարանի գրականութեան ֆակուլտէտ չի կարող ունենալ մի ամբիոն՝ արաբերէնի համար, մի ամբիոն՝ եգիպտագիտութեան համար, մի ամբիոն՝ ասորագիտութեան համար։ Աւ վերջապէս, մի լալտնի տեսակ ընդհանուր զրդումն կալ, եթէ համարձակւեմ ասել, դէպի ներսումն, որի գաղտնիքը Պարիզը դեռ երկար ժամանակ կը պահպանի։ Մեծ կրթութեան կնիքը ուրիշ տեղ չի կարող ստացւել, եթէ ոչ Պարիզում։ Բաց մի անգամ նորա օծումն առած՝ երկար կարելի է պահպանել նորա աղդեցութիւնն ու հոռւ։ Ջերմեռանդ մահմեդականը, որը դնում է սրբազան քաղաքները, չի հարկադրւած ալնտեղ ապրելու. ամեն տեղ, ուր նա գնում է, նա տանում է իւր հետ ալնտեղից դուրս բերած սրբազան կրակը, դրոշմը, որ նա ալնտեղ ստացել է, ոգին, որ նրան ներշնչւած է։ Պարիզը, միջին դարե-

րում, մտաւոր կրթութեան կենդրոնն էր ամբողջ աշխարհիս համար. այնտեղ ձևակերպւում էին, բայց այնտեղ չէին մնում Ամեն ոք, այնտեղ ուսանելուց լիտու, վերադառնում էր իւր երկիրը և իւր ձևով զարգացնում էր այն արմատը, որ պատւաստած էր նրան...

«Աս նրանցից չեմ, պարոններ, որ կարծում են թէ ոգու կրթութիւնը պէտք է գաւառական լինի»:

«Մարդկային ոգին չի ճանաչում գաւառներ, լաւ մեթօդը չ'ունի տեղալին կամ գաւառական բնաւորութիւն: Միմիայն մի քիմիա կալ, մի ֆիզիքա, մի ֆիզիօլօգիա, և կալ միայն մի լեզուադիտութիւն, մի քննադատութիւն, Զւարճութիւնը, կրօնական զգացումները, մանկական և երիտասարդական վիշողութիւնները կարող են ունենալ տեղալին ձև, բայց գիտութիւնը մի է: որպէս մարդկային ոգին, որպէս ճշմարտութիւնը: Հիւանդը—այդ ամենաանաչառը բոլոր մարդկանցից, որովհետև նա միայն մի բանի է ձգտում՝ բժշկելու—երբէք չի գիմիլ գաւառական բժշկականութեան, եթէ ալդպիսի մէկը գոյութիւն ունենար: Նա միշտ կը լինի բժշկականութեան կողմը առանց անականի, այն է լաւի կողմը»:

«Գաւառի բարձր մտաւոր արդիւնաբերութիւնը չը պիտի գաւառի դրոշմ ունենայ: Մարդ իւր ամբողջ կեանքում սիրում է լինել ժողովրդական բարբառով այն երգը, որով նա հրճել է մանկութեան օրերին. բայց երբէք մի գիտութիւն, ֆիլօսօֆալութիւն, քաղաքա-տնտեսութիւն չեն ստեղծւիլ բարբառով»:

«Յաւաւղիմութիւնը, գիտական աշխարհում, չի բաժանում մարդկային ոգին գաւառների մէջ. նա պէտք է Գնջի մալրաքաղաքի և գաւառների մէջ եղած տարբերութիւնները, և ամբողջ երկրից ստեղծի մի միակ դօրք, որը կ'աշխատի լօգուտ գիտութեան, բանականութեան, քաղաքակրթութեան»:

Մօտաւորապէս այսպէս է խօսում մի Ռընան, իմ ընթերցողներ: Որքան մարդկայնութիւն է բուրում այն բոլոր խօսքերից և որքան բարութիւն՝ խօսողի սրտից: Այդ բոլորը ուժի, գերազանց ուժի նշաններ են, ազատ հոգու և կրթած մտքի զեղմունքներ են: Եւ ես պնդում եմ, որ բարութիւնը, մարդկայնութիւնը միմիայն լաւ մշակած ուղեղների արդիւնք են: Նրբ ես այդ տողերից աչքս լիտ եմ դարձնում և նայում մեր լեզուով գրած ու տպած ճառերի վերաջ կամ լօգածների, որոնք ճառերի տեղը պէտք է տան իբր թէ, մի մի անգամ իմ կատարեալ զգաւնքս է գալիս, որից կիսով չափ թեթեւանում եմ գետնին թքելով: Ձը կմ, չը կմ նոցա մէջ այն ոգին, որը կրթութեան աղն է, առանց որի գրականութիւնն ինքը դառնում է մի հարստահարութիւն կամ հարստահարութեան մի միջոց: Յնցել ընթերցողների ներքերը աղմուկներով, համոզւած լինելով սու-

թեան մէջ,—դա առանձին կարգի «համոզածներին» արհեստն է։ Յս մի-
մի հարցնում եմ ինձ.—թէ ինչպէս են կարողանում հանգիստ կերպով քնել
ակնկալտնի կերպով չարանենդութիւն ծածկող զրոգներ։ որովհետեւ ես ակ-
պէս եմ մտածում, թէ գրելու պարապմունքը ամենաստոր ասլրանքի վա-
ճառականութիւնից էլ ստոր փէշակ է, երբ նորա մէջ, ալդ զահրումար
գրելու մէջ, չի դնում մարդկայնութիւնից ներշնչած ոգին, ալն, որ կա-
րող է տալ միայն լաւ մշակած ոգին։

Ներկայ ժամանակումս ակապիսի զգացումներ ծնեցնում են իմ մէջ
առհասարակ ալն բոլորը ինչ ուղղած է «Մուրճ»-ի դէմ, ում գլխից ու բե-
րանից նա բղխած էլ լինի և ինչ ձևով արտապատւած—ալդ միենդն է։
Եւ Աստուած միայն գիտէ—թէ որքան մեծ է նոցա թիւը—և ինչպէս հե-
տամուտ են նոքա «Մուրճ»-ի ամեն մի տողին ու դարձածին։

Ռընանը, որպէս տեսաւ ընթերցողը, շատ հաստատ է խօսում Պա-
րիզի նշանակութեան մասին։ Նա ասաց, որպէս փշում էք, թէ մեծ կրթու-
թեան կնիքը չի կարող ստացուել ուրիշ տեղ, եթէ ոչ Պարիզում։ Յս ու-
զում եմ հաւատալ, որ Ռընանը հասկանալով է բան խօսում։ Ահա ինչու
ես կ'ուզէի, որ Պարիզ գնացողները լինէին ոչ միայն խմբագրութիւնների
ներկայացուցիչները, այլ բոլոր խմբագրատունները տնով-տեղով, իրանց
ամեն աստիճանի ծառայողներով ու աշխատակիցներով, որոնց պակաս են
չալտնի բաներ։ Բաց թող ինձնից մի խորհուրդ առանց զլանալու լսեն.
ով գնում է Պարիզ, թող գտնէ երեք-չորս տարաւ պաշար վերցնի հետը,
որովհետեւ մի-երկու ամսում հաղիւ կարող է մարդուս միտքն ու ոգին
մշակել նոյն իսկ Պարիզը։

ԼՈՒՍԻՆԻ